ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 1033-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387 որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2024թ. նոյեմբերի 29-ի թիվ 131-Ն որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արմավիր համայնքին պատկանող (04-001-0133-ից կադաստրային ծածկագիր) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքում գտնվող գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզի Արմավիր համայնք, քաղաք Արմավիր,Մ. Գորկու փողոց , 127/1 հողամաս:

2. Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրած հասցեն ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 10
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 1034-Ա

ԱՆԱՀԻՏ ՍՈՒՔԻԱՍԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387 որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2024թ. նոյեմբերի 29-ի թիվ 131-Ն որոշումը, Անահիտ Սուքիասի Մուրադյանի 03.09.2025թ. թիվ 4464 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Անահիտ Սուքիասի Մուրադյանին (ծնվ. 18/05/1955թ.) պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մայիսյան գյուղում գտնվող գույքին (կադաստրային ծածկագիր՝ 04-043-0869-0027) տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզի Արմավիր համայնք, գյուղ Մայիսյան, Այգեգործական 1-ին թաղամասի 3-րդ փողոց, 20 հողամաս:

2. Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրած հասցեն ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԳՍՅԱՆ**

2025թ. սեպտեմբերի 10
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 սեպտեմբերի 2025 թվականի N 1035-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ, ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուկաշին համայնքի վարչական սահմաններում գտնվող 7 լոտի 198-002 կոդի 0,1137 հա (զրո ամբողջ մեկ հազար մեկ հարյուր երեսունյոթ տասհազարերորդական) մակերեսով ՀՀ հողային օրենգրքի 60-րդ հոդվածով նախատեսված կոմունալ ենթակառուցվածքների հասարակական կառուցապատման հողամասը 15 տարի ժամկետով ժամանակավոր տիրապետման և օգտագործման է տրամադրվել մրցույթում՝ 2010 թվականի ապրիլի 20-ի հողամասը մրցութային կարգով վարձակալության տրամադրելու մասին թիվ 1 և 20.04.2010թ. հողամասի մրցույթով վարձակալության տրամադրման արդյունքների մասին թիվ 2 արձանագրությունների հիման վրա հաղթող ճանաչված քաղաքացի Էդուարդ Մեսրոպյանին, համաձայն որի Արմավիրի մարզի Լուկաշին համայնքի և քաղաքացի Էդուարդ Մեսրոպյանի միջև 2010 թվականի մայիսի 06-ին կնքվել է հողամասի վարձակալության պայմանագիր՝ /գրանցված սեղանամատյան 2439-ով/:

Քաղաքացի Էդուարդ Անդրանիկի Մեսրոպյանի մահից հետո /մահացած՝ 24.10.2014թ./ ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի, Լուկաշին գյուղում գտնվող 0,1137 հա մակերեսով հողամասի վարձակալության իրավունքի նկատմամբ (ընդհանուր համատեղ սեփականություն) հաստատվել է Լյուբով Պավլովի Մեսրոպյանի սեփականության իրավունքը /հիմք՝ սեփականության իրավունքի վկայագիր՝ գրանցված գրանցամատյան N 4705/ և ժառանգ է ճանաչվել քաղաքացի՝ Նարեկ Արմենի Մեսրոպյանը /հիմք՝ ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիր՝ գրանցված գրանցամատյան N 4709/, տրված՝ 2024 թվականի հուլիսի 03-ին ՀՀ «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտարի կողմից/:

Հողամասի վարձակալության պայմանագրի գործողության ժամկետը լրացել է:

Իրավատերերը մինչ օրս բարեխղճորեն և լրիվ ծավալով կատարել են իրենց՝ վարձակալողի պարտականությունները.

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ և 468-րդ հոդվածների 1-ին մասերով, 616-րդ հոդվածի 3-րդ մասով, 619-րդ հոդվածի 2-րդ մասով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի Լուկաշին համայնքի և քաղաքացի Էդուարդ Մեսրոպյանի միջև 2010 թվականի մայիսի 06-ին կնքված հողամասի վարձակալության պայմանագրի 5.2 կետը և քաղաքացի Լյուբով Պավլովի և Արմինե Արարատի Մեսրոպյանների լիազորված անձ՝ Վազգեն Սերգեյի Ղազարյանի 2025 թվականի հուլիսի 11-ի թիվ 3536 դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Արմավիրի մարզի Լուկաշին համայնքի և քաղաքացի Էդուարդ Մեսրոպյանի միջև 2010 թվականին մայիսի 06-ին կնքված հողամասի վարձակալության պայմանագրում /գրանցված սեղանամատյան 2439-ով/ կատարել փոփոխություններ.

1) Հողամասի վարձակալության պայմանագրում «վարձակալ՝ քաղաքացի Էդուարդ Մեսրոպյան, բնակվող ՀՀ Արմավիր քաղաքի, 45 փողոց, թիվ 21 տունը» բառերի փոխարեն կարդալ՝ «քաղաքացի Լյուբով Պավլովի Մեսրոպյան, ծնված՝ 10.07.1948թ., հաշվառված՝ ՀՀ Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, քաղաք Արմավիր, Վ. Համբարձումյան փողոց, 21^{ա} տուն հասցեում և քաղաքացի Նարեկ Արմենի Մեսրոպյան, ծնված՝ 10.12.2011 թվականին» բառերը:

2) Հողամասի վարձակալության պայմանագրի գործողության ժամկետն երկարացնել մինչև 06.05.2040 թվականը:

3) Պայմանագրի 3.1 կետում նշված վարձակալած հողամասի տարեկան վարձավճարը կազմում է «24150 (քսանչորս հազար մեկ հարյուր հիսուն)» բառերի փոխարեն կարդալ «100000 (մեկ հարյուր հազար)» բառերը:

2.Իրավաբանական բաժնին՝ իրավատերեր Լյուբով Պավլովի Մեսրոպյանի և Նարեկ Արմենի Մեսրոպյանի հետ կնքել համաձայնագիր՝ 2010 թվականի մայիսի 06-ին /գրանցված սեղանամատյան 2439-ով/ կնքված հողամասի վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին:

3.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 11
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 սեպտեմբերի 2025 թվականի N 1036-Ա

ՆԱՐԵԿ ԱՇՈՏԻ ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387 որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2024թ. նոյեմբերի 29-ի թիվ 131-Ն որոշումը, Նարեկ Աշոտի Կոստանյանի լիազորված անձ Ցոլակ Համբարձումի Վարդանյանի 11.09.2025թ. թիվ 4595 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Նարեկ Աշոտի Կոստանյանին (ծնվ. 03/07/1986թ.) սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լենուղի գյուղում գտնվող գույքին (սեփականության վկայական թիվ 2635847) տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզի Արմավիր համայնք, գյուղ Լենուղի, 3-րդ փողոց, 21 բնակելի տուն:
2. Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրած հասցեն ենթակա է պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2025թ. սեպտեմբերի 11
ք. Արմավիր

4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 1037-Ա

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 48.1 հոդվածի 4-րդ, 5-րդ, 6-րդ և 8-րդ կետերով, 76-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին>> թիվ 286 որոշման 46.2-րդ կետի <<բ>> ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 35-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2024թ. նոյեմբերի 29-ի թիվ 131-Ն որոշումը և Վահե Գրիգորյանի 04.08.2025թ. թիվ 3903 դիմումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաք Ջիվանու փողոց 13/3 հասցեում գտնվող 5 քմ մակերեսով հողամասին կից (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 06122024-04-0009 վկայական) ընդլայնման նպատակով կառուցապատման իրավունքով լրացուցիչ հողամաս տրամադրելու մասին և հաշվի առնելով այն, որ ընդլայնման նպատակով տրամադրվող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Արմավիր քաղաք Աշուղ Ջիվանու փողոց, 13/4 հասցեում գտնվող հողամասի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 18082025-04-0062 վկայական) փաստացի մակերեսը կազմում է 4,9 քմ, որի ուրվագծային չափերն ու դիրքը թույլ չեն տալիս, որ այն դառնա առանձին հրապարակային սակարկությունների առարկա, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի փետրվարի 11-ի N 102-Ն որոշմամբ հաստատված Արմավիր համայնքի գլխավոր հատակագծի համաձայն՝ տրամադրվող հողամասը հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության և ընդգրկված է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաք, Ջիվանու փողոց 13/3 հասցեին կից Արմավիր քաղաք, Աշուղ Ջիվանու փողոց, 13/4 հասցեում

գտնվող 4,9 քմ մակերեսով հողամասն ընդլայնման նպատակով կառուցապատման իրավունքով տրամադրել Վահե Մարզպետունու Գրիգորյանին:

2. Ընդհանուր գույքին տալ միասնական հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք, Արմավիր քաղաք,Աշուղ Ջիվանու փողոց, 5/1 հողամաս :

3. Լիազորել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնին Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի անունից կնքել հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր՝ գործողության ժամկետը սահմանելով մինչև 14.04.2028 թվականը,իսկ կառուցապատման իրավունքի տարեկան վճար՝ 12000 (տասներկու հազար) << դրամ 1 քմ հողամասի համար:

4. Սահմանել, որ կառուցապատման իրավունքի պայմանագրի նոտարական վավերացման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարում է Վահե Մարզպետունու Գրիգորյանը՝ իր միջոցների հաշվին,

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար սահմանված տեղական վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

6.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2025թ. սեպտեմբերի 12
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբերի 2025 թվականի N 1038-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՏԱԿ ՋԻՎԱՆԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ԱՎԵԼ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2024թ. նոյեմբերի 29-ի թիվ 131-Ն որոշումը, ըստ սեփականության իրավունքի վկայագրի 25.05.2021թ., ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի 16.08.2025թ. և Արտակ Ջիվանի Առաքելյանի 29.08.2025թ. թիվ 4410 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Արտակ Ջիվանի Առաքելյանին (ծնվ. 26/03/1989թ.) պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի քաղաք Արմավիր, 04-001-0105-0009 կադաստրային ծածկագրով 600,0 քմ մակերեսով հողամասին կից ավել զբաղեցրած 53,0 քմ մակերեսով հողամասը անհատույց հատկացնել նրան՝ սեփականության իրավունքով:

2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար սահմանված տեղական վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 12
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբերի 2025 թվականի N 1039-Ա

ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԵՐԻՆ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի, 29-րդ ,33-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, Հասմիկ Հովհաննեսի Եղիազարյանի 02.09.2025թ. թիվ 4434 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հասմիկ Հովհաննեսի Եղիազարյանին (ծնվ. 15.01.1964թ.) սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք գյուղ Հացիկ, 7-րդ փողոց, 24 հասցեի (սեփականության վկայականի N 21122021-04-0081) 0.14990 հա հողամասին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզի, Արմավիր համայնքի գյուղ Հացիկ, 7-րդ փողոց, 24/1 բնակելի տուն, իսկ 0.12810 հա հողամասի հասցեն թողնել նույնը ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի քաղաք Արմավիր, գյուղ Հացիկ, 7-րդ փողոց, 24 բնակելի տուն:

2. Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման :

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2025թ. սեպտեմբերի 12
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբերի 2025 թվականի N 1040-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔ ԱՐՄԱՎԻՐ, ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՓՈՂՈՑ, 7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՌՈՒՍՏԱՎԵԼ ՀԱԿՈԲԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ և 51-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի «Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին» N600-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին , 2-րդ, 4-րդ կետով, հաշվի առնելով ,որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի քաղաք Արմավիր, Գրիգոր Լուսավորիչ փողոց ,7 հասցեում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով , չեն առաջանում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի , այդ թվում ՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին , հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2023թ.-ի դեկտեմբերի 21-ի թիվ 10 նիստի 136-Ն որոշումը, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2024թ. նոյեմբերի 29-ի թիվ 131-Ն որոշումը ,ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի 16.04.2025թ. և Ռուստավել Հակոբի Հակոբյանի 21.05.2025 թվականի թիվ 2652 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վերականգնել Ռուստավել Հակոբի Հակոբյանին պատկանող իրավունքները Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի քաղաք Արմավիր, Գրիգոր Լուսավորիչ փողոց, 7 հասցեում գտնվող 0.0419 հա մակերեսով օրինական հողամասի վրա

1984թ. կառուցված 139,8 քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ, իսկ 2,2քմ մակերեսով օժանդակ շինությունը և 8,3 քմ մակերեսով օժանդակ շինությունը համարել ինքնակամ:

2. Ընդունել ի գիտություն , որ

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Ուժը կորցրած ճանաչել 2025 թվականի հունիսի 06-ի թիվ 0698-Ա որոշումը:

4. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2025թ. սեպտեմբերի 12
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 1041-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 02-Ի ԹԻՎ 0442-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածով և հիմք ընդունելով Օրբելի Սմբատյանի 04.09.2025թ. թիվ 4470 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի 2024 թվականի ապրիլի 02-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳԵՎԱՆ ԳՅՈՒՂ 5-ՐԴ ՓՈՂՈՑ 1 ՆՐԲԱՆՑՔ 14 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՕՐԲԵԼԻ ԲՈՒԴՈՆՈՒ ՍՄԲԱՏՅԱՆԻ ԵՎ ՍԻՐԱՆՈՒՇ ԲՈՒԴՅՈՆՈՒ ՍՈՒՄԲԱԹՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ԱՎԵԼ ՀՈՂ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 0442-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1. Որոշման վերնագրում «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳԵՎԱՆ ԳՅՈՒՂ 5-ՐԴ ՓՈՂՈՑ 1 ՆՐԲԱՆՑՔ 14 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՕՐԲԵԼԻ ԲՈՒԴՈՆՈՒ ՍՄԲԱՏՅԱՆԻ ԵՎ ՍԻՐԱՆՈՒՇ ԲՈՒԴՅՈՆՈՒ ՍՈՒՄԲԱԹՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ԱՎԵԼ ՀՈՂ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» բառերը փոխարինել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳԵՎԱՆ ԳՅՈՒՂ 5-ՐԴ ՓՈՂՈՑ 1 ՓԱԿՈՒՂԻ 14 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՕՐԲԵԼԻ ԲՈՒԴՅՈՆՈՒ ՍՄԲԱՏՅԱՆԻ ԵՎ ՍԻՐԱՆՈՒՇ ԲՈՒԴՅՈՆՈՒ ՍՈՒՄԲԱԹՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ԱՎԵԼ ՀՈՂ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» բառերով:

1.2. Որոշման 1-ին կետում «Այգեվան գյուղ 5-րդ փողոց 1-ին նրբանցք 14 հասցեում» բառերը փոխարինել «Այգեվան գյուղ 5-րդ փողոց 1-ին փակուղի 14 հասցեում» բառերով:

1.3. Որոշման 2-րդ կետում «Այգեվան գյուղ 5-րդ փողոց 1-ին նրբանցք 14 հասցեում» բառերը փոխարինել «Այգեվան գյուղ 5-րդ փողոց 1-ին փակուղի 14 հասցեում» բառերով:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2025թ. սեպտեմբերի 12
ք. Արմավիր